

այս կողմերուս երկրաշարժի յաճախու-
թիւնը այն աստիճանի այդ գեղեցիկ
շէնքը խախտած են, որ քար քարի վրայ
մնացած չէ : Աեանց հիմունքը մեծաւ
մասամբ բնաջինջ եղած են . կ'իմացուի
որ ամենէն առաջ ասոնք խախտած են
ու բոլոր շէնքին կտորուանքներուն տա-
կը թաղուեր են . ասկէ կ'երևնայ որ
մարդկային ձեռուրները չեն որ այս
շէնքս կործաներ են . ընդ հակառակն
Հայք այնչափ յարգ կու տային անոր , որ
մէկ կտոր մըն ալ չեն վերցըներ իրենց
առանձին շինուածոցը գործածելու , ևս
առաւել օտարաց թողլու որ վերցընեն :
Իւերդին քարերէն խել մը վերուցած
են , բայց թաղտին կտորուանքը այն-
պէս ամբողջ է , որ առանց կտոր մըն ալ
սլակսելու՝ ամբողջ շէնքը կրնայ շինուիլ :

„ Կ'ըսեն թէ Տրդատ այս շէնքս յոյն
ճարտարապետաց ձեռքովը շինած է ,
իր Խոսրովիդուխտ քրոջը հաճոյից տեղ
մը շինելու մտքով :

„ Իսկ Տրդատայ թաղտին ձեւը քա-
ռակուսի է (թիւ 13) , 3/4 ոտք երկայնու-
թեամբ , երեսը դէպ 'ի բերդին դուռը ,
ու 6 յոնիական գեղեցիկ սիւններ ունէր .
սիւններուն շրջապատն էր 25 բթաշափ ,
բարձրութիւննին 22 ու կէս ոտք . շէն-
քին ամէն կտորն ալ փառաւոր է . քիւ-
քը առիւծներու գլուխներով զարդա-
րուած է : Այստ գետին վրայ նայող
կողմն ալ ճակտին պէս շինուած է ,
քիչ փոփոխութեամբ : Այս հովա-
նոցիս արեւմտեան կողմն է Խոսրովի-
դըխտոյ բուն պալատը (թիւ 6) , որուն
շէնքը աւելի պարզ է ու հեղեղատի քա-
րերէ շինած է . այս շէնքս ալ հովանո-
ցին պէս գետնի հաւասար է : Վառնիի
մէջ դեռ շատ աւերակներ կան եկեղե-
ցեաց : Այդ հատը միայն մնացած է ,
զորն որ այս աւերակաց մէջ բնակող
քանի մը տնուորները (թիւ 2) նորո-
գեր են . մնացած ամէն շէնքերն ալ եր-
կրաշարժի բռնութենէն ընկճուած են :
Ի՛նչ սարսափելի ոյժ եղած պիտի ըլ-
լայ , որ այս ամուր պատերը կարենայ
թղթի թերթի մը պէս թաւալել :

Հ. Գ. Մ .

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Վարդ Ս . Աննոյի , Գոյունոյ արքեպիսկոպո-
սին : (Տես կրնա 141)

Շարունակութիւն և վերջ

ԼԱ

„ () գոստոս կայսեր ժամանակը լ'ը-
տուած երկնից բարձրութենէն երկրիս
վրայ դարձուց աչքը . ան ատեն թա-
գաւոր մը ծնաւ ստացող երկնային ա-
ռաքինութեան , Յիսուս Վրիստոս ,
որդին լ'ստուծոյ , ծնեալ 'ի սուրբ Կու-
սէն Սարիամայ : Հրաշալի նշաններ
մէկէն 'ի մէկ երեցան 'ի Հռոմ . զուտ
ձէթ բղխեց գետնէն ու հողուն վրայ
երկար միջոց տեղ սահելով քալեց , հրե-
ղէն ու արիւնային կարմիր շրջանակ մը
բոլորեց արեւուն սկաւառակը . սրով
հետեւ ան ատեն մեր փրկութեանն հա-
մար կը մերձենար այն պետութիւնն
որ բոլոր աշխարհք պիտի ծածկէր :

ԼԲ

„ Սուրբն Պետրոս , երկնային պատ-
գամաբերը , խորտակեց 'ի Հռոմ սա-
տանային կարողութիւնը . բարձրացուց
զաստուածային նշանը զխաչն և նուի-
րեց քաղաքը Փրկչին : Հոնտեղէն իւրը-
կեց Փռանկները դարձնելու համար
իրեք աստուածապաշտ անձինք , Ղլլա-
քերիոս , Ղլլալերիոս , և ուրիշ երրորդ
մը՝ որ ճամբան մեռաւ : Սէկալ երկու-
քը եկան իմացուցին աս բանս Պետրո-
սի , որ իր հովուական գաւազանն ա-
նոնց ձեռքը տուաւ : Ի՛նոնք գրին զայն
Սատերնոսի գերեզմանին վրայ , հրա-
մայելով իրեն յանուն Սրբոյն Պետրոսի
որ մահուան քունէն արթննայ և իրենց
հետ ընկերակցի Փռանկաց երկիրն եր-
թալու : Սատերնոս իր վարժապետին
անունը լսածին պէս՝ հնազանդեցաւ ա-
նոնց . լ'ստուծոյ կամքովը երկիրը պա-
տուեցաւ , ու ինքը անկէց դուրս ելլե-
լով հողակոշտը բռնեց ու ազատեցաւ :

գերեզմանէն, ուր քառասուն օր հանգ-
չեր էր: Իր կեանքը քառասուն տարի
աւելի երկնցաւ: Ըյս սուրբ անձինք-
ները նախ և առաջ ՚ի Վրէլ քարոզե-
ցին. յետոյ դարձուցին ՚ի քրիստոնէու-
թիւն զՎոլոնիա, որուն առաջին եպիս-
կոպոսն եղաւ այն՝ որ մեռելներէն յա-
րութիւն առեր էր:

ԼԳ

« Ըսոնք Ըստուծոյ ծառայութեանը
հնազանդեցուցին նաև խել մը բազմու-
թիւն (Փռանկայ)՝ աւելի ազնուական
պատերազմով մը քան զՎեսարու անոնց
հետ ըրած պատերազմը. ասոնք սոր-
վեցուցին անոնց յաղթել մեղաց և Ըս-
տուծոյ ծառայ ըլլալ: Իրենց սկզբունք-
ները հաւատարմութեամբ պահուե-
ցան այն եպիսկոպոսներէն, որ իրենցմէ
ետքը իշխանութեան աթոռը նստան
երեսուններէք թուով, մինչև Սրբոյն
Ըննոյի եպիսկոպոսութիւնը: Ըննոյմէ
եօթը յարգելի սուրբեր են, որ մեր ա-
չաց առջև կը փայլին ինչպէս եօթն առ-
տեղք գիշերուան մէջ: Սրբոյն Ըննոյի
աստղը յստակ է ու լուսափայլ, իր փառ-
քը կը միանայ ուրիշ փառքերու հետ՝
ինչպէս ծանրագին մատնիի մը վրայ
հաստատուած ամեթուլսը:

ԼԴ

« Ըյս ընտիր անձը օրինակ առնենք
մեզի. թող մեզի հայր ըլլայ անիկայ
Ճմարտութեան և առաքինութեան:
Իրբոր Հենրիկոս Գ կայսրը տուաւ ա-
նոր իր վստահութիւնը և Ըստուծոյ
կամքը կատարուեցաւ անոր հանգիստ-
պէս հաստատուելովը ՚ի Վոլոնիա, իր
Ժողովրդեան մէջ արութեամբ մը քա-
լեց անիկայ: Ինչպէս որ արեգակը օ-
դուն մէջ կախուած կը լուսաւորէ միան-
գամայն երկինքն ու երկիրս, այսպէս
Ըննոյ եպիսկոպոսը կը քալէր ՚ի մէջ
Ըստուծոյ և մարդկանց: Իր առաքի-
նութիւնը անանկ ազգեցութիւն ունէր
արքունեաց մէջ, որ բոլոր կայսերու

թիւնը իր հրամաններուն հնազանդե-
ցաւ, մինչդեռ ինքը կը ծառայէր Ըս-
տուծոյ հրեշտակի եռանդեամբ մը:
Ստացաւ ինքը այս կրկին փառքը, որով
Ճմարտութեան ու իրական իշխանութիւն մը
կը բանեցընէր:

ԼԵ

« Իր ազնուութիւնը շատ մարդիկ
կը ճանչնային. ահաւասիկ նկարագրեմ
իր բնաւորութիւնը. համարձակ էր ին-
քը իր խօսքերուն մէջ, անխուով ՚ի ճըշ-
մարտութեան. մեծերուն քով՝ առիւծ
մըն էր, թշուառաց քով՝ հանգարտա-
բարոյ գառնուկ մը: Լի էր խստութե-
նդդէմ մոլորներու, լի քաղցրութեամբ
առ առաքինիս. այրիք և որբերը կ'օր-
հնէին զինքը. ճարտասան էր քարոզե-
լու ու ՚ի մեղաց արձրկելու մէջ, և ա-
նանկ երկնային օծութիւն մը ունէր,
որ ամէն մահկանացու սիրտերը կը թա-
փանցէր: Ըննոյ սիրելի էր Ըստուծոյ,
և Վոլոնիոյ թեմը երջանիկ գտնուե-
ցաւ այսպիսի եպիսկոպոսի մը արժանի
ըլլալովը:

ԼԶ

« Վիշերը՝ երբոր քունը կը տարա-
ծուէր քաղաքին վրայ, բարի հովիւր
կ'ելլէր անկողնէն, և իր սուրբ աս-
տուածսիրութեամբը՝ այցելութեան կ'եր-
թար շատ եկեղեցիներու, և իր ողոր-
մութիւններովը կը սփոփէր շատ մը ան-
ապաւէն աղքատներ, որ Ըստուծոյ տա-
ճարին մէջ կը սպասէին իրեն: Իրբ-
որ կին մը իր խեղճ տղովը կը հեծէր
կը հառաչէր ամենուն երեսէն ձգուած,
եպիսկոպոսը անձամբ կ'երթար անոր
անկողին մը պատրաստելու. ասանկով
Ճմարտապէս հայր որբոյ եղաւ ինքը,
ոչ երբէք ետ կենալով անոնց օգնական
ըլլալէն, և Ըստուած անոր վարձքը տը-
ւաւ իրեն:

ԼԷ

„ Լըջանկութիւնը թագաւորեց բոլոր կայսերութեան մէջ երբոր արժանաւոր առաջնորդը իրաւանց գործադիր եղաւ , երբոր արքունական գահը բարձրացուց զմատաղ Հենրիկոսը : Իր արդարութեան համբաւը հեռաւոր տեղեր տարածուեցաւ . Յունաստանի ու Լնգդիոյ թագաւորներն ընծաներ խըրկեցին իրեն . նոյնպէս ըրին Տանիմարգայի , Ֆիանտրայի ու Ռուսաստանի թագաւորները : Լսանկով խել մը գանձ դիզեց ինքը Գոլոնիոյ համար և ամէն կողմ եկեղեցիները զարդարեց : Եւ իսկ ինքը Լստուծոյ փառացը նուիրուած չորս տաճար կանգնեց . հինգերորդն է 'ի Սիկպերկ' իր սիրելի քաղաքը , ուր կը գտնուի հիմա իր գերեզմանը :

ԼԸ

„ Բայց իր հոգին պատիւներու հրապոյրքներէն խալըսելու համար , Լստուած այն կերպով վարուեցաւ իրեն հետ՝ ինչպէս ոսկերիչն որ կ'ուզէ թանկագին ճարմանդ մը շինել : Կը սկսի աշիկայ նախ զտէլ ոսկին բոցի մէջ , ետքը կը փառաւորցնէ զայն փափուկ բաճակածքով մը , եղերաց վերջի աստիճանի նրբութեամբ , բազմաթիւ ինամքներով որ կը ջանայ յղկելու ու ներկելու գոհարեղէնները . Լստուած ալ այսպէս ուզեց կազմել զՍուրբն Լնոյ անթիւ վիշտերով :

ԼԹ

„ Եւ ատանգամ երկրին մեծերը եպիսկոպոսին դէմ ելան , բայց Լստուած ումէն բան գարձուց իրեն փառք ըրաւ . շատ անգամ մատնուեցաւ ինքը անոնցմէ , որոնց կ'իյնար զինքը պաշտպանել , կամ արհամարհուեցաւ անոնցմէ՝ զորոնք ինքը պատիւներու հասուցեր էր : Արջապէս չլախցան անոնք ինչուան փնտելու զինքը զինուք քաղաքէն , ինչ-

պէս երբեմն Լքիսողոմ աքսորեց զաստուածապաշտն Գաւիթ . ասիկայ նորոգութիւն էր նոյն եղեռան : Լնիւ եպիսկոպոսը շատ թշուառութիւններ , շատ տառապանքներ քաշեց՝ Վրիստոսի արժանաւոր նմանող երևնալով , և Լստուած անոր վարձքը տուաւ իրեն երկնից բարձրութենէն :

Խ

„ Լն ատեն սկսաւ այն ահաւոր կռիւր , որուն մէջ խիստ շատ մարդիկ մեռան , երբոր Հենրիկոս Գն կայսրութիւնը խռովեցաւ , երբոր մարգասպառութիւնը , աւարառութիւնը , հրդեհները կործանեցին ու աւերեցին զեկեղեցիս ու զարտորայս , Տանիմարգայէն ինչուան Գալապրիա , Ֆրանգոնիայէն ինչուան Ունկարիա : Լնոնք՝ որոնց ոչ ոք կրնար դէմ կենալ՝ եթէ աննենգ հաւատարմութեամբ ուղենային միանալ իրարու հետ , պատերազմեցան իրենց մերձաւորացն ու ազգականաց հետ . կայսերութիւնը իր զէնքերն իր սրտին դէմ դարձուց , և իր յաղթական բազկաւր՝ ինքն իր անձէն յաղթուեցաւ : Վրիստոնէից դիակները անթաղ կը մնային , ու կը գիշատուէին չար գայլերէ՝ անտառներու կաղկանձող հիւրերէն : Սուրբն Լնոյ չուսալով որ կարենայ չարիքը դադրեցնել , փափաքեցաւ որ ալ վերջանայ իր կեանքը :

ԽԱ

„ Գեպ 'ի Սալֆէլտ՝ որ 'ի լուրին կիա՝ կ'երթար ինքը , երբոր Լստուած իրեն յայտնուեցաւ . առաւօտ մը , ժամը իննին , երկինքը բացուեցաւ իրեն համար , երկնային փառք մը տեսաւ զոր մէկու մը չկրցաւ իմացնել . բայց երբոր ճամբուն մէջտեղը ծունկ չօքեցաւ ու աղօթեց , անանկ աւելցաւ իր ուժն՝ որ հարկ եղաւ տասնըվեց ձի լծել իրեն : Լն ատեն ապագայից վրայօք տեսիլք մը տեսաւ , և այս միջոցէն ետքը հիւանդացաւ :

ԽԲ

„Պիշեր մը Սուրբն Լ'նոյ տեսաւ որ ինքը փառաւոր սրահ մը կը մտնար՝ այնպիսի հրաշալի պալատի մը մէջ, ինչ պէս որ կրնայ երկնից վրայ մտածուիլ։ Տեսաւ երազին մէջ որ այն պալատը ոսկով բոլոր պատած էր, ակունքներով կը շողար, և ուրախութեան երգերու արձագանգներ կը հնչէր։ Հին կը փայլէին բազմութիւն եպիսկոպոսներու, որոնք ճառագայթարձակ աստղերու կը նմանէին։ անոնց մէջ էր Պարտոն եպիսկոպոսը, Սուրբն Հերիբերտոս իրեն փառաց պսակովը, և խել մը ուրիշ մեծարոյ առաջնորդներ, որոնց ամենուն իղձն ալ, մտածութիւնն ալ մէկ էր։ Փառաւոր աթոռ մը պարապ էր։ Սուրբն Լ'նոյ ուրախացաւ այս պատուոյ ցոյցին համար։ և շնորհակալ կ'ըլլար Լ'ստուծոյ՝ յուսալով որ անոր վրայ պիտի նստի, յուսալով հասնելու այն ցանկալի աթոռին, բայց մէկալ առաջնորդները արգիլեցին զինքը, որովհետեւ սրտին մէջ արատ մը ունէր։

ԽԳ

„Լ'նոնցմէ մէկը, Լ'նոլտ՝ երբեմն եպիսկոպոս Սուրմնի, ոտքի վրայ ելաւ, և Սրբոյն Լ'նոյի ձեռքէն բռնելով՝ քիչ մը մէկզի տարաւ զանիկայ։ “ Սրիթարուէ, ըսաւ անոր քաղցրութեւ, հաւատարիմ ծառայ Լ'ստուծոյ։ Ս երջուր այն արատը, որովհետեւ քեզի համար պահուած է այս յաւիտենական աթոռը։ Վրիչ ժամէ վերջը այս երանելիներա ուրախութեամբ պիտի ընդունին զքեզ, բայց դու դեռ չես կրնար անոնց մէջ կենալ։ Վրիստոս ցուցուց քեզի թէ ինչպիսի անարատութիւն կը պահանջէ ինքը։ դու պատուովը և օրհնութիւններով լցեալ պիտի ըլլաս։ “ Սուրբն Լ'նոյ սաստիկ տխրեցաւ երկրիս վրայ դառնալու ստիպուելուն համար, և թէ որ տեսիլքը մէկէն աներևութացած չըլլար, ինքը պիտի չուզէ-

նար արքայութիւնը թողուլ՝ թէ և բոլոր աշխարհք իրեն տրուէր։ այսչափ մեծ է երկնային երանութիւնը, որուն ծերք և երիտասարդք՝ պէտք է որ տենչանք։ Վրունէն որ արթնցաւ, իմացաւ թէ ինչ էր ընելիքը։ ներեց Պիշերիոյ բնակիչներուն, թէպէտ և իր աթոռութեանն արժանի էին անոնք։

ԽԴ

„Երբոր եկաւ հասաւ այն նշանաւոր վայրկեանն որ Լ'ստուած ուզեց զինքը վարձատրել, պատժուեցաւ ինքը ինչ պէս ատենօք աստուածապաշտն Յոբ։ ոտուրներէն ինչուան գլուխը՝ իր անդամները խոցերով ծածկուեցան։ Լ'սպէսով այս առաքինի հոգին մարդկային խեղճութիւններէն, և այս կորստական մարմնէն ազատելով՝ բարձրացաւ դէպ 'ի երանաւետ արքայութիւնը։ Երկիրս ընդունեցաւ իր անդամները, իր հոգին երկինք թռաւ, ուր մեր յիշատակն իրեն ետեւէն պիտի երթայ, ուր մենք ալ կը յուսանք հասնելու։

ԽԵ

„Երբոր Լ'ստուծոյ ներկայութեանը առջև ելաւ, 'ի յաւիտենական երանութիւն, վեհանձն առաջնորդը մեզի հետ անանկ վարուեցաւ՝ ինչպէս որ արծիւը կը վարուի իր ձագերուն հետ, զորոնք առաջին թռիչքին կը վարժեցընէ։ Վսեմ կերպով մը օդուն մէջ թռաւ տարած կը կենայ, լեռներէն վեր կը բարձրանայ, և իր ձագերը ուրախութեամբ կը հետեին անոր։ Լ'սպէս ինքն ալ ուզեց սորվեցընել մեզի թէ ինչ ճամբով պէտք է հետեինք իրեն, ուզեց ճանչցընել մեզի թէ ինչպիսի երջանկութեան վայելք կան յերկինս։ ան գերեզմանին վրայ՝ որ մեռած կը կարծուէր ինքը, փառաւոր հրաշքներ գործեց, հիւանդներն և վատառողջները իրմէն առողջութիւն ստացան։

ԽԶ

« Բռնուղտ անուշուլ աղնուական աս-
պետ մը՝ հպատակ մը ունէր Ֆոլբրէհգ-
անուամբ , որ յանցանքով մը իր տիրոջը
երեսէն ինկաւ : Բն ատեն անիկայ Բ-
տուած մէ հեռանալով , սատանային ապա-
ւինեցաւ և օգնութեան կանչեց զայն
ընդդէմ Բռնուղտի : Իրիկուն մ' որ իր
ձին փնտրուելու համար անմարդաբնակ
դաշտէ մը կ'անցնէր , սատանան երե-
ցաւ անոր և արգիլեց որ և իցէ քրիստո-
նէական գործք մը չգործելու : Եւ մաս-
նաւորապէս արգիլեց անոր իր երեւումը
չհաշակելու , ըսելով որ եթէ մէկ մար-
դու մըն ալ յայտնելու ըլլայ , պատառ
պատառ կ'ըլլայ մարմինը . իսկ եթէ
ընդհակառակն ուզենայ իրեն հետեւիլ ,
պաշտպան կ'ունենայ զինքը : Բ. յս ըս-
պառնալիքներն ու այս խոստմունքները
համոզեցին զգար հպատակը . վստահա-
ցաւ անիկայ մարդկանց թշնամւոյն , և
շատ չանցաւ զըջացաւ այս բանիս վրայ :

ԽԷ

« Իրկորդ օրը՝ անիկայ Բռնուղտի
ետեւէն ձիով կ'երթար , սատանային
խոստմանը վրայ յուսալով , և սկսաւ
գէշ խօսքերով ուրանալ զԲտուած , և
հայհոյել սուրբերը . ո՛վ յանդուգն սըր-
բապղծութիւն : Հուսկ ուրեմն՝ չար
մարդը սկսաւ նախատել զՍուրբն Բն-
ոյ , ըսելով թէ ինքը ամէն բան գի-
տէր , թէ խայտառակ ու խաբէական
էին անոր ամէն գործքերը , թէ եպիս-
կոպոսը միշտ մեղաց մէջ ապրած ըլլա-
լով՝ ինչպէս ուրեմն հրաշքներ կրնար
ընել : Բայց մէկէն այս նախատինքնե-
րուն պատիժն ընդունեցաւ . որովհետեւ
յանկարծակի իր ձախ աչքը ջրոյ պէս
վար թափեցաւ : Բն հաւատը չուզեց
խեղբը գլուխը ժողվել . և ահա յան-
կարծակի նոր պատիժ մըն ալ վրան ե-
կաւ . հարուած մը գլխուն ուտելով՝
դետին ինկաւ ու աջ աչքը դուրս ցատ-
քեց նետի մը պէս : Բն ատեն խոտին

վրայ իյնալով , սկսաւ օգնութեան կան-
չել : Բոլոր ուրիշները սարսափելով աս
դիպուածէս՝ իրենք զիրենք խաչակնքե-
ցին ու առ Բտուած դիմեցին :

ԽԸ

« Բռնուղտ մէկէն քահանաներ կան-
չել տուաւ , որ այս մարդս եկեղեցի մը
տարին և խոստովանելու կերպը սորվե-
ցուցին անոր : Սերջապէս աղաչեց անի-
կայ զՍուրբն Բնոյ ողորմելու իրեն ու
առողջութիւն չնորհելու : Բ. յն ատեն
բոլոր ներկայ եղողները վկայ եղան նո-
րանշան հրաշքի մը . անոր արտեանան-
ցը տակ երկու նոր աչուրներ ծնան , և
մէկէն տեսութիւն ստացաւ . այսչափ
մեծ է Բտուածոյ կարողութիւնը :

ԽԹ

« Գիտենք մենք թէ ինչպէս երբեմն
ծովուն խորը բացուեցաւ երբոր Սուլ-
սէս անցուց Իսրայէլայիները անթաց
ոտուրներով ջրերու մէջէն . ինչպէս ա-
ռաջնորդեց անոնց դէպ 'ի այն երանելի
երկիրը , այն ընտրելոց աշխարհքը՝ ուր
կաթի ու մեղրի գետեր կը վազէին ,
ուր ձէթն ու վճիտ ջուրը ապառաժնե-
րէ կը ցայտէին , ուր մանանան երկին-
քէն կ'անձրեւէր , ուր ամէն բարիք ա-
ռատութեամբ էին : Բտուած Սուլ-
սէսի վրայ հրաշալի նշաններով ցուցուց
իր պաշտպանութիւնը . 'ի վերայ այսր
ամենայնի իր քոյրը իրեն դէմ ելլելու
յանդգնեցաւ : Ինչպիսի բորոտութիւն
մէկէն 'ի մէկ ծածկուեցաւ մարմինը :
Բայց շուտով իր եղբորը գութը շար-
ժեցաւ վրան : Բնակ Սուրբն Բնոյ
ալ գթացաւ այս մարդուն վրայ . առող-
ջութիւն ստանալ տուաւ անոր , որպէս
զի մենք ալ ճանչանք Բտուածոյ բա-
րութիւնը , որ կը վարձատրէ իր սուր-
բերուն պատուոյն համար զուրցուած
խօսքերը և իր օգնական ձեռքը կ'ա-
ռաջնորդէ մեզի դէպ 'ի ամէներջանիկ
արքայութիւնը » :